1018. ԽԱՉՔԱՐ. Գյուղամիջյան գերեզմանոցում, պարզ, թևերից վեր վարդակներ, խորանի անկյուններից կախված են հովհարաձև զարդեր, թիվին՝ 2 տող.

ԿԱՆ|ԳՆԵՑ |ԱՒ ԽԱՉՍ ԱՎ|Գ |Ն-
ԱՎ|ԱՆ |ՈՒԹԵ|ԱՆ |ԱՐԴՈՒԹԻՆ:

Ծանոթ. Քարը չեչոտ է, վատ հարթված, տառերը փորված են երեսանց և հազիվ են ընթերցվում: Լուսանկարից չի պարզվում՝ որոշ գրեր թայթայված են, թե՞ հապավված:
Վերծանությունը երկբայելի է:

ՅԱՂԴԱՆ

Գյուղում ու շրջակայքում ուշագրավ ճարտարապետական հուշարձաններ չկան, բացի արևելակողմի միաթոիչք հոյակապ կամրջից (XII-XIII դդ.), որը, ցավոք, ոչ մի հիշատակագիր չունի:

Գյուղի մեջ նորաշեն փոքր ու անշուք մի եկեղեցի է կանգնած: Տեղի հույն բնակիչները այն կոչում են Բանաիա (Աստվածածին), որը շատ ավելի հնի վերակառուցումն է:

Արձանագրություններ կան խաչքարերի վրա, որոնք հանդիպում են գյուղի սահմաններում, դրանցից մեկը չափազանց գեղեցիկ ու համաչափ թևավոր հուշարձան է՝ կանգնած Ստեփանավան տանող ճանապարհի աջ կողմում:

1019. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉ. կանգնած է ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի վրա. թևերի շրջանակներին մեկ տողով, մեծ մասը ջարդոտված է.

. . . ՀՈԳՈՅ ԻԳՆԱՏԻՈՍԻ ԵՒ ՎԱՍԱԿԱ . . .
ՁԱՒԱԿԱՑՆ ՏԱՑԻ . . .

Ծանոթ. Նման խաչքարեր կանգնեցվում էին հնում մեծ մասամբ որպես ճանապարհների ուղենիշներ, հավատո հանգանակներ, մարդաշատ տեղերում, բնակավայրերում, պաշտվող ծառերի տակ: Խաչքարը վերաբերում է XIII դարին:

1020. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. բեկոր, ընկած գյուղամիջյան գերեզմանոցում. 3 տող.



Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ :ՈՁ: (1231) [Կ]-
ՆԳՆԵՑ [ԱՒ] ՁԽԱՉՍ ԱՌ
ԱԾ ԲԱՐԷԽԱՒՍ ԳՐԻԳ[ՈՐՈ]:

1021. ԲԵԿՈՐ. ագուցված գյուղամիջի նոր եկեղեցու պատի մեջ.

Ի ԹԻՌ Ի Թ[ԻՆ] Ռ(1000) . . . . . .
ՁԱՔ . . . . . ՁԱՔ . . .
ԷՔ ՅԻՇԵ . . . ԷՔ ՅԻՇԵ [ՑԷՔ]:

Ծանոթ. Հավանաբար պետք է ավարտվեր *որք երկրպագէք յիշեցէք ի Քս* կապակցությամբ:

1022. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գյուղամիջի եկեղեցու մոտ, որը հետագայում դարձրել են գուռ.

ԹՌ Թվ[ԻՆ]. :ՌՃՀԵ: (1726):
ՃՀԵ

Ծանոթ. Գյուղը հայաթափվել է XIX դ. 20-ական թվականների վերջերին, հաճախակի կրկնվող թուրք-պարսկական բախումների հետևանքով:

1023. ԽԱՉՔԱՐ. գյուղից արևմուտք, գերեզմանոցում, 1 տող.

ԹՎ | ՉՉ Թվ[ԻՆ] ՉՉ (1457):

1024. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գյուղի հարավարևմտյան գերեզմանոցում, 3 տող.

ԹՎ :Ռ: Ի: Թվ[ԻՆ] :Ռ: Ի: (1571)
ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ ԱՅՍ ԷՀԱՆԳԻՍՏ
ՂԱՆՎԷՏՈՒՆ ՂԱՆՎԷՏՈՒՆ:

Ծանոթ. Հարթ սալատապան է, երկարապոչ նռան, սափորի և հովհարաձև (աստծո աչքի) զարդերով: Անունը երկմտելի է:

ԱԳԱՐԱԿ

Գյուղի արևելյան եզրին, կամրջից քիչ հեռու, խճուղուն մոտ կա մի հին և ընդարձակ գերեզմանատուն, ուր մնում են բազմաթիվ խաչքարերի բարձր պատվանդանները միայն. զարմանալ կարելի է, որ հարյուրի չափ խաչքարեր իսպառ ոչնչացել են: Այդտեղ մնում է մի կանգուն խաչքար և տապանաքարեր: